

Ս. Աթոռոյ մատենադարանին Մարկոս գրչի ընդօրինակած ձեռագրին (Թ. 1190) Ս. Տեղեաց հին ցուցակին մէջ, որ հաւանաբար Խաչակրաց ժամանակ յատիներէնէ թարգմանուած է: Ուրիշ աղբիւրէ ալ կը տեղեկանանք թէ Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին տիրացած էր նոյն Գաթիղմայի (Ս. Կուսի այս վանքին) հողերուն և այգիներուն, ու կը վայելէր անոնց արդիւնքը. Bethléem, le Sanctuaire de la Nativité, էջ, 141): Այս վկայութեանց համաձայն, նոյն վանքը գոյութենէ դադրած էր ԺԲ. դարուն:

## Նոյն վանքին հայկական վերահաստատութիւնը

2. Վերև յիշեցինք արդէն թէ Բեթղեհէմի ճանապարհին վերայ գտնուած Ս. Աստուածածնի վանքին տեսուչն էր Ս. Թէոդոս, որ ժամանակ մը նոյն պաշտօնը վարելէ վերջ, մեկնած էր Բեթղեհէմի արեւելեան կողմը և հիմնած էր Տէյր Տուսի կոչուած վանքը. աւանդութեան մը նայելով, ըստ Մետափրաստի, (Migne, P. G. Հատ. 114, էջ, 478), երեք մոզերը գիշեր մը այս տեղ հանգչած են, երբ հրեշտակէն հրաման ստացան վերագառնալ իրենց երկիրը, առանց Երուսաղէմ հանդիպելու: Ս. Թէոդոսի կենսագրին նայելով՝ յիշեալին վանքը ունէր չորս եկեղեցիներ, Հայոց, Արաբաց, Պարսից և սլաւախօս վանականաց համար: Նոյն դարուն, վանականներ կային՝ որ անխտիր իրենց վանքերուն մէջ կ'ընդունէին ամէն ազգէ վանականներ, որոնք իրենց սեպհական լեզուաւ ուրոյն ուրոյն կը կատարէին եկեղեցական պաշտամունքը. այսպէս էր նաև Ս. Թէոդոսի վանքին մէջ. Հայք ալ իրենց մայրենի լեզուով հո՛ն կը կատարէին եկեղեցական արարողութիւնները: Ս. Թէոդոս տարակոյս չկայ թէ նոյն կանոնը ընդգրկած էր Գաթիղմայի իր տեսչութեան օրով ալ: Ուստի Երուսաղէմի Հայ միաբանութենէն ոմանք, հինաւուրց իրաւունքի մը վրայ շիմուելով, ջերմեռանդութեամբ պիտի փափաքէին վերահաստատել Գաթիղմայի Ս. Աստուածածնի կործանուած վանքը, շէնցընելու զայն և օժտելու ուրոյն միաբանութեամբ մը. այս մասին ունինք «ճառընտիրի» մը խիստ շահեկան յիշատակարանը, որ բացայայտօրէն կ'ապացուցանէ այն վանքին հայկական վե-